

ՆԱՄԱԿ «ԲԱԶՄԱՎԷՊ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

1995 թ. ամռանը Երեւանում Հայր Յարութիւն Պատրիկեանին յանձնեցի իմ «Հայկական զինանշաններ» մենագրութեան երկրորդ մասը (առաջինը լոյս է տեսել Երեւանում 1994 թ.): Երկրորդ մասում ես քննում եմ Արտաշէսեանների, Արշակունիների ժամանակաշրջանների հայկական զինանշանագիտութեան ժառանգութիւնը (ինչպէս նաեւ մի քանի հարց միջնադարեան զինանշանների վերաբերեալ):

1997 թ. «Հանդէս ամսօրեայ»ի 1-12 հատորում տպագրուած է Հայկ Տէր-Ղեկոնդեանի մեծածաւալ յօդուածը, «Հայկական հնագոյն զինանշաններ եւ դրօշակներ պատմութեան ընթացքին», ուր հեղինակը անդրադառնում է հայկական զինանշաններին, Արտաշէսեան շրջանից մինչեւ Կիլիկիա: «Հանդէս ամսօրեայ»ի այդ համարը լոյս է տեսել մեծ ուշացումով եւ Երեւանի գրադարաններ (օր. Մաշտոցեան Մատենադարանի գրադարան) հասել է միայն 2000 աշնան վերջին:

Նշուած հանգամանքների պատճառով ես ի վիճակի չէի անդրադառնալ Հայկ Տէր-Ղեկոնդեանի աշխատութեանը, արտայայտել իմ վերաբերմունքը եւ կատարել իմ դիտողութիւնները:

Սոյն նամակում ես անում եմ նախնական եւ շատ ընդհանուր բնոյթի դիտողութիւններ յիշեալ աշխատութեան վերաբերեալ, թողնելով մանրամասն քննութիւնը յետագայում, իմ յաջորդ աշխատութիւններում:

Որպէս ընդհանուր դիտողութիւն ասեմ, որ աշխատութիւնը գրուած է Հայր Վարդան Հացունու «Հայոց դրօշները պատմութեան մէջ» գրքի խիստ ազդեցութեամբ:

Այժմ շարադրեմ իմ դիտողութիւնները:

1) Արտաշեսագների շրջան

Ըստ Հայկ Տէր-Ղեկոնդեանի Հայոց յայտնի հնագոյն գի-
նանշանը Տիգրան Մեծի խոյրի վրայ պատկերուած արծիւներն
են, արեւի հետ միասին (էջ 163):

Սխալ է Տիգրանից առաջ գինանշաններ պատկերուած են
Ծովքի թագաւորների դրամների վրայ, ինչպէս նաեւ Արտաւազդ
Ա.ի դրամի վրայ:

Այնուհետեւ հեղինակը գրում է, (էջ 165), որ բացի նշուած
արքայական նշանից ուրիշ քանդակներ կամ տեղեկութիւններ
Արտաշեսագների նշանների մասին չկան: Իրականում դրամա-
գէտներ Ասպետ Տօնապետեանի, Զարեհ Պտուկեանի աշխատու-
թիւններում բաւական տուեալներ կան Արտաշեսագների գինան-
շանների մասին, որոնց անդրադարձել ենք, «Բագմավէպին»
յանձնած մեր աշխատութեան մէջ:

Տիգրան Մեծի յաջորդ Արտաւազդ Բ.ի մասին գրում է (էջ
167), որ նրա խոյրի վրայ նախկին երկու արծիւները եւ արեւը
մնացին միայն որոշ ժամանակ, բայց հաւանական է, որ քաղա-
քական վիճակը ժամանակի ընթացքում ստիպեց նրան հրաժա-
րուելու արծիւների պատկերից, պահելով միայն արեւը, որը
միայն կրօնական նշան էր: Այդ արուեսցի, իր կարծիքով որովհե-
տեւ արծիւները հաճելի չէին հռոմէացիներին: Արծիւների վե-
րացումը հաճելի էր նաեւ պարթեւներին, որովհետեւ, ըստ իրեն,
դրանով վերանում էր այդ երկուսի մրցակցութիւնը «արքայից
արքայ» տիտղոսի համար:

Սա ակնյայտ թիւրիմացութիւն է, Արտաւազդը չի հրաժա-
րուել «արքայից արքայ» տիտղոսից, նրա բոլոր դրամների վրայ,
յետսակողմը, գրուած է յունարէն «ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ», տես
Զ. Պտուկեանի աշխատութիւնը՝ Coinage of the Artaxiads of
Armenia, by Paul Z. Bedoukian, London, 1978, էջ 25-27, 69-70,
նկարները՝ տախտակ 6, N 129-135:

Արտաւազդի ժամանակ, մինչեւ նրա գերութիւնը Անտոնիոսի
կողմից, Հայաստանը մ.թ. ա. 51-50 թթ. նորից նուաճումներ
է կատարել, հասնելով Պաղեստին, դաշնակցելով պարթեւների
հետ, նորից գերիներ են բերուել Հայաստան (Տէ'ս Հայ ժողովր-
դի պատմութիւն, հտ. 1, Երեւան, 1971, էջ 608, 613, 615):

Արտաւազդէ Բ.ի մասին Հ. Տէր-Ղեւոնդեանի կարծիքը մի-
անգամայն սխալ է:

Այնուհետեւ՝ Արտաշէսեան վերջին թագաւոր՝ թագուհի Է-
րատոյի խոյրի վրայ տեսնում է միայն արեւը, բայց ծանօթ չէ
զոյգ արծիւներ-արեւով թագի օրինակին, որը խորհրդանշում էր
թագուհու պայքարը վերականգնելու հայկական պետութեան
հզօրութիւնը: Նկարը տե՛ս Հ. Վարդան Հացունի, Պատմութիւն
հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 77, նկար 33, նոյնը՝ P. Z.
Bedoukianի նշուած աշխատութիւնը, էջ 76, տախտակ 8, նկար
165, 166:

Բ. Արշակունիների շրջան

Հեղինակը համոզուած է, որ Արշակունիների խոյրի վրայ
գործածուած է եղել Արտաշէսեանների արեւ-Միհրը եւ թերեւս
դահինի (էջ 171), բայց յաջորդ տողերում գրում է, որ պարթեւ
Արշակունիները կը ցանկանային հաճոյանալ հայերին եւ «հնի
կրկնութեամբ» սկսած Տրդատ Ա.ից (!) խոյրի վրայ դրեցին ար-
ծիւ, քիչ բարեփոխուած (էջ 172): Այս ենթադրութեան ոչ մի ա-
պացոյց չի բերում:

Նրա կարծիքով, քրիստոնէութեան ընդունումից յետոյ հայ-
կական պետական դրօշն ու զինանշանը չփոխուեց, քանի որ ար-
ծիւը շատ էր սիրուած հայերի մօտ, բայց նրա կրծքին աւելա-
ցաւ խաչը (էջ 173):

Սա միայն ենթադրութիւն է, առանց որեւէ փաստարկման:

Այդ կապակցութեամբ պէտք է ասել, որ Արշակունիների
զինանշանի վերականգնումը կապուած է որոշակի դժուարու-
թիւնների հետ, քանի որ նրանց դրամները մեզ յայտնի չեն,
բայց կան որոշ զինանշաններ Դ-ե դդ. պաշտամունքային կա-
ռուցներում (Մայր տաճար) եւ Աղցի դամբարանում: Սակայն
այդ յուշարձանները ամբողջութեամբ դուրս են մնացել Հ. Տէր
Ղեւոնդեանի տեսագաւառից: Այս բաժնում աւելի շատ մանրամաս-
ներ կան պատմութիւնից, որոնք լրիւ աւելորդ են:

Գ. Միջնադարեան զինանշաններ

Ինչպէս ասուեց, Հ. Տէր-Ղեւոնդեանի աշխատանքը գրուած
է Հայր Վարդան Հացունու մենագրութեան խիստ ազդեցու-

Թեամբ (նոյնն է նոյնիսկ վերնագիրը), Բագրատունիների եւ Մամիկոնեանների նշաններն որոշուած են համաձայն Վ. Հացունու վարկածի: Բագրատունիների նշանի կապակցութեամբ, միանում է Վ. Հացունու տեսակէտին, որ նրանց նշանը Անիի Մայր տաճարի արծիւն է, սակայն, իր կարծիքով, Բագրատունիների արծիւը շատ աւելի մեղմ է Զուարթնոցի արծուի խիզախ արտայայտութիւնից, այն «աղանակերպ» է:

Հ. Տէր-Ղեւոնդեանին զարմանալի չի թւում, որ Բագրատունիների արծիւը իր բնորոշմամբ չի արտայայտում որեւէ հօրութիւն, այդ ըստ իրեն բացատրում է նրանով, որ Բագրատունիները մարզպանական շրջանի կառավարիչների նման են թարկւում էին ոչ թէ Տիգրանին, այլ արաբներին, որոնց հետ պահպանում էին որոշ յարաբերութիւններ (էջ 184-186):

Անհրաժեշտ չենք համարում մեկնաբանել նման միամիտ մեկնաբանում, նշենք միայն, որ Զուարթնոցի կառուցման ժամանակ մարզպանական շրջանը աւարտուած էր:

Ինչ վերաբերում է Անիի գլխաւոր դարպասի առիւծի պատկերաքանդակին, ապա հեղինակը միանում է Վ. Հացունու «կասկածին» նրա «հարազատութեան» առթիւ (անհիմն վերագրելով նրան օտար ծագում), շատ թռուցիկ, առանց որեւէ ապացոյցի, որոշում է Բագրատունիների դրօշի գոյնը սպիտակ, որը զարդարուած էր ոսկեթելով հիւսուած արծուով: Հացունու նման առիւծը համարում է Անի քաղաքի նշան (Հ. Տէր-Ղեւոնդեան, նշ. աշխատ., էջ 188, նշուած է նաեւ նկար 26, պէտք է լինի նկար 24 եւ 25):

Իրականում Բագրատունիների տոհմական նշան էր զոյգ յովազներ (նաեւ զոյգ առիւծներ) եւ կենաց ծառը: Անիի առիւծը՝ պետութեան նշանն է, այլ ոչ թէ քաղաքի, մեր գրքում այդ մասին մանրամասն գրել ենք, տե՛ս (Հայկական զինանշաններ, մ. Ա, 1994 էջ 15-37):

Հայր Վարդան Հացունու տեսակէտի ազդեցութեամբ է դրոշմուած նաեւ Մամիկոնեանների զինանշանը՝ աղեղ ճանկող արծիւ: Արդեօ՞ք, գրում է Հ. Տէր-Ղեւոնդեանը, Հայոց պատմութեան մէջ, «ուշ թափանցած» (!) Մամիկոնեանները որդեգրեցին աւանդական դարձած տարբերանշանը՝ այն է արծիւը:

Արծիւը, ըստ հեղինակի, Հայոց արքայական հնագոյն եւ աւանդական զինանշանն էր եւ դրօշի զարդը, որեւէ մէկը չէր կարող գործածել արծուանշանը: Այդ առթիւ, շարունակում է հեղինակը, արժէ մտաբերել, որ Մամիկոնեանները առաջնորդում էին ամբողջ հայկական բանակը, արքայական բարեհաճ թոյլտուութեամբ Մամիկոնեաններին իրաւունք էր տրուած նետն ու աղեղը աւելացնել արքայական ծիրանի դրօշակի ներքեւ, այն էլ միայն այն ժամանակ, երբ նրանք առաջնորդում էին հայկական ամբողջ բանակը, ներառեալ նախարարական գնդերով: Այս հարցին, ըստ իրեն, այլ հնարաւոր լուծում դժուար է գտնել (էջ 177, 178, նկար 20):

Իր կողմից Հ. Տէր-Ղեւոնդեանը առաջարկում է Մամիկոնեան նշանի ձեւաւորուելու նոր տարբերակը՝ Զուարթնոցի արծուին աւելացնում են նետն ու աղեղը (նշուած աշխատութիւնը, նկար 22):

Մամիկոնեանների զինանշանի ձեւաւորման նոր եղանակի կապակցութեամբ պէտք է ասել, որ հեղինակի աղբիւրագիտական պաշարը շատ նեղ է, Մամիկոնեան տոհմի բազմաթիւ զինանշաններից նա ծանօթ է միայն Զուարթնոցի արծուաքանդակին, մնացածները նրա տեսադաշտից դուրս են մնացել (վ. Հացունին գոնէ ծանօթ է Դսեղի «Բարձրաքաչ» վանքի երկգլխանի արծուի պատկերին): Մամիկոնեան տոհմը հնացած վարկածով համարում է «ուշ թափանցած հայ ժողովրդի ներս» (հաշուի չառնելով Մոմկայոս զօրավարի գոյութիւնը Տիգրան Մեծի օրօք): Չնայած Մամիկոնեանների զինանշանը ճիշտ է վերականգնուած, բայց այդ արուած է վ. Հացունու ազդեցութեամբ, նուաճ, քայքայ արուած է վ. Հացունու ազդեցութեամբ, Զուարթնոցի քանդակի օգնութեամբ վերականգնել Մամիկոնեանների նշանի պատկերը սխալ է, քանի որ Մամիկոնեանների նշանը ձեւաւորուել էր Զուարթնոցից շատ աւելի շուտ, արդէն մ.թ. Բ-Գ դդ.:

Քրիստոնէական շրջանում Հ. Տէր-Ղեւոնդեանի կարծիքով արծուի պատկերի կրօնին աւելացուել է իսաչը՝ շատ հաւանական է, գրում է նա, որ խաչազարդ արծիւը պէտք է դառնար Մամիկոնեանների զինանշանը (էջ 173, 174, նկար 18): Այդ կապակցութեամբ պէտք է ասել, որ սկզբնաղբիւրներում նման վարկած հաստատող փաստ չկայ, Փաւստոս Բուզանդը մանրամասն նկարագրելով տոհմի նշանը չի յիշատակում խաչը, քիչ հաւանա-

կան է, որ խաչի առկայութեան դէպքում պատմիչն անտեսէր այն: Բացի այդ՝ Դ-Ը դդ. Մամիկոնեանների եւ նրանց տոհմակից խաղբակեանների զինանշանային պատկերաքանդակներից ոչ մէկում խաչ չի հանդիպում:

Հեղինակը արծարծում է նաեւ Կիլիկիայի հայ արքայատոհմերի զինանշանագիտութեան հարցը, իր կարծիքով հայերը աստիճանաբար եւ առանց «բռնարարքների» տիրացել են Կիլիկիային (կոպիտ սխալ՝ Ռ. Մ.): Հաստատելով այս երկրում Ռուբինեանները, հաւանաբար քաղաքական տարբեր պատճառներով, արծիւը փոխարինել են առիւծով: Բերուած են մի քանի օրինակներ Լեւոն Բ-ի, Հեթումեանների, Լուսինեանների դրամներից:

Այս բաժինը նոյնպէս գրուած է Վարդան Հացունու աշխատութեան ազդեցութեամբ, Հացունու նմանութեամբ Լեւոն Բ-ի դրամների վրայ առիւծի պատկերը բացատրում է արքայի LEO անունով, անտեսելով Ռուբինեանների եւ Բագրատունիների ազգակցական կապը եւ աւանդոյթների փոխանցումը: Չի պատկերացնում, որ Ռուբինեանները նոյն Բագրատունիներն են եւ նոր վայրում շարունակեցին հին զինանշանի աւանդոյթը: Շատ միամտաբար կարծում է, որ Հայաստանում առիւծներ տարածուած չեն եղել, ուստի առիւծի կերպարը, ըստ իրեն, անցել է Հայաստան Հնդկաստանից (անտեսուած են էրէբունիի առիւծապատկեր զինանշանները):

Կիլիկիայի զինանշանագիտութեանը յատկացուած բաժնում, այսպիսով, որեւէ նորութիւն բացակայում է:

Սրանով մենք սահմանափակում ենք մեր դիտողութիւնները Հ. Տէր-Ղեւոնդեանի աշխատանքի վերաբերեալ: Որպէս ընդհանուր եզրակացութիւն պէտք է ասենք, որ հեղինակը անծանօթ է Բագրատունիների, Մամիկոնեանների զինանշանների բազմաթիւ օրինակներին, միջնադարեան միւս տոհմերի, մասնաւորապէս՝ խաղբակեանների Ջաքարեանների, Կիւրիկեանների, Օրբելեանների նշանների հարցը բոլորովին չի քննուած, չնայած յօդուածի վերնագիրը պարտաւորեցնում էր կատարել այդ քննութիւնը: Կոպիտ սխալներ են թոյլ տրուած պատմական դէպքերի ակնարկներում:

1994 թ. լոյս տեսած մեր աշխատութեանը («Հայկական զինանշաններ») ծանօթ չէ, բնական է, որ չի անդրադարձել:

Ամիոսիելով, կարող ենք ասել, որ Հ. Տէր-Ղեկոնդեանի նշուած աշխատանքը Վ. Հացունու մենագրութեան ծանօթագրութիւնների եւ նկարազարդման տպաւորութիւն է թողնում:

ՌԱՖԱՅԷԼ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ